

ԵՌԱԶԱՓ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԱԳԻԾԸ*

21-րդ դարին բնորոշ բարդ ու հակասական գործընթացները մեկ հարթության վրա քննելու պարագայում անհնար է հասկանալ ու մեկնաբանել Հայաստանի Հանրապետության 100-ամյակի նախօրեին մեր երկրում տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունների իրական պատճառներն ու հնարավոր հետևանքները:

Միայն տարբեր հարթություններում ծավալված և ի վերջո իշխանափոխության հանգեցրած 2018 թ. ապրիլ-մայիսյան քաղաքական զարգացումները որպես **ներքնապես տարամիտված ամբողջություն** դիտարկելու միջոցով է հնարավոր բացահայտել դրանց հետնախորքը: Որովհետև Հայաստանում արձանագրված վերջին շրջադարձի վերաբերյալ տարբերակված կամ վարիանտային մեկնաբանությունների զուգահեռ գոյակցության փաստը բացահայտում է ոչ միայն տվյալ գործընթացի անավարտությունը, այլև նրանում տարբեր քաղաքական դերակատարների ներգրավվածության իրական նպատակները:

Մեր կարծիքով՝ 2018-ի ապրիլ-մայիսին մենք գործ ունեինք զուգահեռ հարթությունների վրա ծավալված, բայց խորքում միմյանց հետ սերտորեն շաղկապված ներքին ու արտաքին զարգացումների բավականին բարդ խճանկարի հետ: Ներկայումս հիմնականում երեք հարթությունների վրա բյուրեղացած նրանց մասնակիցների տարամիտված շահերի գունապնակը ցույց է տալիս, որ պատմաքաղաքական դրամայի անավարտության պայմաններում անհրաժեշտ է առաջնորդվել շարունակվող գործընթացի **եռաչափության** փաստը լուսարձակելու և նրա զարգացման հեռանկարները բացահայտելու զույգ մեկնակետերով: Որովհետև մեզ հետ տեղի ունեցածը մինչ օրս մեկնաբանվում է իբրև.

ա) 2008-ից հետո երկրում ձևավորված փողապետական վարչակարգի¹ կոռումպացվածության արդյունք՝ ներքաղաքական սուր պայքարի հեղափոխական հանգուցալուծում, որի համար հատկանշական էր համաժողովրդական և անգամ համազգային ընդվզման հզոր ալիքը,

բ) «գունավոր հեղափոխությունների» արևմտյան ճարտարապետների կողմից հրաշալի կերպով բեմականացված մի թավշյա ներկայացում, որը

* Ընդունվել է տպագրության 04.07.2018:

1 Մեզանում փողապետական վարչակարգ կամ պարզապես **փողապետություն** հասկացության «հեղինակային իրավունքը» պատկանում է «ՎԷՄ» հանդեսին, որը, դեռևս իր 2009 թ. 3-րդ համարում հստակորեն սահմանելով այդ հասկացությունը, ցույց է տվել 2008-ին փողաբաժանումի միջոցով ձևավորված վարչակարգի սկզբունքային տարբերությունն իր նախորդից: Տե՛ս «Արձանագրությունները բացահայտեցին մեր հին հիվանդությունները», Խմբագրական, «ՎԷՄ», 2009, N 3, էջ 4-5:

Ժ (ԺԶ) փարի, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, 2018
ՎԷՄ համահայկական հանդես

վարպետորեն օգտագործեց հայ ժողովրդի դժգոհությունը՝ առկա իշխանությունը տապալելու և Հայաստանի արտաքին քաղաքական նախապատվությունները փոխելու համար,

գ) Ղարաբաղի հարցի «եվրասիական լուծման» համատեքստում ազատագրված 5 շրջանների վերադարձն ապահովելու՝ Մոսկվայի համառ փորձերը ժամանակավորապես կասեցրած ստվերային գործարք՝ Հայաստանի իշխանության ու ընդդիմության մի հատվածի միջև, որը «լեգիտիմացվեց» երկրի նախկին ու ներկա առաջին դեմքերի կազմակերպած 2018 թ. ապրիլ-մայիսյան «համատեղ ներկայացման» միջոցով:

Քանի որ ճշմարտությունը խիստ բարդ է ու հիրավի՝ բազմաշերտ, նման տարամիտված մեկնաբանությունները «խաղաղ գոյակցության» իրավունք ունեն որպես գիտելիք մեր մասին, բայց ոչ գիտելիք մեզ համար: Որովհետև իրենց մեջ պարառելով տեղի ունեցածի պատճառների կամ հնարավոր հետևանքների առանձին բաղադրատարրերը՝ դրանք ցույց են տալիս, որ որքան էլ փորձենք առաջնորդվել սեփական ժողովրդի **ինքնիշխան կամքի** առաջնության կանխադրույթով, առանց շարունակվող գործընթացի եռաչափության ընկալման՝ այդ կամքի իրացումը չի կարող վերածվել անշրջելի պատմականության: Իսկ մինչ այդ պարտավոր ենք հստակեցնել, թե 1991-ից հետո որտեղ և ինչպես ենք տեղապտույտ արձանագրել հանրապետության գաղափարի ինստիտուցիոնալացման ձանապարհին:

*Հանրապետության գաղափարի արժեզրկումը մեզանում սկսվել է դեռ Հայաստանի առաջին նախագահ «Լևոն թագավորի» օրոք, սակայն սկզբնական շրջանում դրսևորվել է ժողովրդավարության սահմանափակումների տեսքով: Նրա վարկաբեկման գործընթացը համակարգված բնույթ է սրացել 1990-ականների վերջերից նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ծավալված՝ հզոր հակաանկախական շարժման համալրաբար, որն իր խորքում փայփայում էր կայսրության վերականգնման նպատակով: «Ազգային» դիմակի տակ թաքնված հեղինակաբեկության ընդդիմության այդ ռևանշիստական շարժումն ընթացել է իր դասական՝ ռուսական և բազմաթիվ տեղային բնորոշների բարդ փոխակերպումներին բնորոշ երկու հիմնական հանգրվաններով: Առաջինում Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի և 1990-ականների մյուս ժողովրդավարների դեմ պայքարելու համար «հայրենասիրական» կարգախոսներով քաղաքական ասպարեզ իջած նախկին համակարգի **սպասները** իրենց երկրներում հաստատեցին քաղաքացիական հասարակությանը հակադրվող այսպես կոչված՝ **տրամադրող իշխանությունը**: Մինչդեռ ժամանակին դեռևս Ջոն Ադամսն էր նկատում, որ «Հանրապետությունը հաստատում են իրավական պետությունն և ոչ թե տրամադրողանց պետությունն լինելու համար»²:*

Տղամարդու իշխանությունը մարմնավորող հայրնի կերպարների կողմից ազգային ավանդույթը շահարկելու անհաջող փորձերից հետո, որոնք Ռուսաստանում ընդունեցին սպիտակգվարդիականության վերհուշի ու «նահապակ ցարի» պաշտամունքի, իսկ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում՝ Լենկ Թեմուրին ու նրա նման եղուզակներին փառաբանելու տեսք, շուրջով սկիզբ առավ **երկրորդ** հանգրվանը, երբ խորհրդային ժա-

² <https://ru.wikipedia.org/wiki/республиканизм>

ռանգության «պահեստապահներն» անցան նրա անգուսպ թախանին ու ինքնահարսարացմանը:

Հայաստանում ևս կրկնված նույն գործընթացի հիմնական առանձնահատկությունը Ղարաբաղի հարցի քաղաքական շահարկումն էր, սկզբում՝ **Կեղծ հաղթողականության**, իսկ հետագայում՝ **քողարկված պարտվողականության** դիրքերից: Դա է պարճառը, որ մեր սեփական տեղապարտության 20-ամյակը մարմնավորվեց սկզբում տղամարդու կամ «միակ տղամարդու» իշխանության, իսկ հետագայում հերիտրիտիային տարածքի հարստությունը մեկ «գանձարկղի» մեջ ներգրավելու համար անհրաժեշտ նոր կերպարի տեսքով, որը փողից ու անձնական շահից բացի այլ հավասարեք չուներ: Ուստի բնական է, որ վերջինս իր իշխանությունը սկսեց 2008–2009 թթ. հայ-թուրքական երկխոսության, իսկ իրականում՝ անձնավորության փորձով և ավարտեց հայ-ադրբեջանական ճակատում 2016-ի ապրիլյան արյունոտ նահանջով:

Սակայն հետխորհրդային իրողություններին բնորոշ համատարած թախանի արդյունքում դուրարային համարժեքով կուտակված «մեծ փողերի» արտահոսքը դեպի Արևմուտք չար կատակ խաղաց հայաստանյան փողապետության համար՝ նրան դնելով փողի և իշխանության միջև ընտրություն կատարելու պարտադրանքի առջև: Գոյություն ունեւ նաև հստակորեն ձևակերպված մյուս, ավելի վտանգավոր երկրնտրանքը՝ 2018 թվականի ապրիլից հետո Հայաստանի ոչ լեգիտիմ իշխանության երկարածգման «մոսկովյան պարտամուրհակը»՝ ազատագրված 5 շրջանները Ադրբեջանին հանձնելու պահանջը: Ուստի մինչ այդ ՀՀ Սահմանադրությունն իրենց հագով կարած և Հայաստանի ժողովրդին խաբած մեր իշխանավորները այս անգամ էլ պետք է խաբեին արտաքին գործընկերներից որևէ մեկին: Իրենց փողերի վրա նստած Արևմուտքին չէին կարող խաբել, ուրեմն մնում էր Ռուսաստանի դեկավարությունը: Այդ պատճառով դյուրին կամ թավշյա հեղափոխության գարնանային հաղթարշավին բնորոշ ժողովրդի դժգոհության բուռն պոռթկմանն իրականում ֆոնային դեր էր վերապահված արևմտյան օրհնությամբ իրականացված «հներին՝ փող, նորերին՝ իշխանություն» բանաձևի կիրարկման գործում, որի հապշտապ իրականացումը թույլ տվեց հետաձգել Ղարաբաղի հարցի հանգուցալուծումը:

Արդյունքում՝ 2018 թ. մայիսյան իշխանափոխությունից հետո Հայաստանը հայտնվեց էլ ավելի բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում, որի էությունը, դժբախտաբար, քչերն են միայն գիտակցում: Ազատագրված 5 շրջանները Հայաստանի իշխանավորների ձեռքով Բաքվին հանձնելու և նրան Եվրասիական տնտեսական միության մեջ ներառելու մոսկովյան հայտնի ծրագիրը նորից տապալվել է, և դրա դիմաց Ադրբեջանին տիրանալու փոխարեն՝ Ռուսաստանը հայտնվել է Հայաստանը կորցնելու վտանգի առջև: Ակնհայտ է, որ տեղի ունեցածի իրական սցենարիստը՝ 2018 թ. ապրիլ-մայիսին սեփական «ինքնասպանությունը» բեմականացրած **Մեծ փողապետը**, խաբել է և՛ իր մոսկովյան տիրոջը, որն առայժմ չգիտի, թե ումից պահանջել նրա խոստումների կատարումը, և՛ իշխանության խաղաղ փոխանցման գծով իր փաստացի գործընկերոջը, որին ադրբեջանական նոր ագրեսիայի սանձազերծման միջոցով կարելի է վերածել **քավության նոխազի**: Բայց Ադրբեջանի նոր ագրեսիային միանգամից քարտ-բլանշ տալու պարագայում

Ռուսաստանը կարող է գործ ունենալ Արևմուտքի հետ, որը ներկա հանգրվանում սկսել է դիվանագիտորեն շոյել ռուսների գլուխը: Ուրեմն թեև վերջին իշխանափոխության արդյունքում Հայաստանի սուբյեկտայնությունն ամրապնդվել է՝ մեր առջև բացելով արտաքին աշխարհի հետ հարաբերվելու նոր հնարավորություններ, բայց դրա հետ միասին՝ մեծացել է մեր երկրի աշխարհաքաղաքական խոցելիությունը: Որովհետև Ռուսաստանի և ԱՄՆ նախագահների վերջին հանդիպումից հետո էլ երկու գերտերությունների հարաբերությունների բարելավման գործընթացը շարունակելու է ընթանալ «մուկն ու կատու» հայտնի խաղի տրամաբանությամբ: Իսկ դա նշանակում է, որ առաջիկայում, երբ Մոսկվան ուշքի կգա արևմտյան գրկախառնությունից, Հայաստանի նոր իշխանությունները կարող են բախվել Ադրբեյջանի 2016 թվականի ապրիլյան ագրեսիայի նոր, ավելի հզոր դրսևորմանը: **Ուրեմն՝ կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ ներկայումս երկրում թափ հավաքող նախընտրական կամպանիան չպետք է շեղի մեր ուշադրությունը հիմնական վտանգից՝ Ղարաբաղյան պատերազմի նոր բռնկման հեռանկարից, ինչը կարող է վերածվել նաև նախկինների քաղաքական ռևանշի գործիքի:**

Մինչդեռ, 2018 թ. ապրիլ-մայիսին մեզանում ծավալված եռաչափ գործընթացի **վտանգավոր հետագիծը** բացահայտելու փոխարեն հետհեղափոխական շրջանում ևս մեր հասարակությունն առաջնորդվում է ոչ թե քաղաքացու ռացիոնալ մտածողությամբ, այլ վերջին իշխանափոխության արդյունքում իր տեսադաշտը գրաված ավանդական հերոսի՝ **Նիկոլի** կերպարի էպիկական ընկալումներով: Նման մոտեցման պահպանման պարագայում նոր հերոսը շատ շուտով **կուռքի** է վերածվելու, որը միշտ էլ երկու երես է ունենում, իսկ կուռքից մինչև հակահերոսն ընդամենը մեկ քայլ է: Ուրեմն քանի դեռ ազգովի չենք գիտակցում հանրապետության տերը լինելու սեփական իրավունքը, փոթորկող ծովի ափին նստած այն չարաճճի երեխաների վիճակում ենք, ովքեր ավազից կուռքեր են ծեփում և ապա տապալում:

Մեզանում առկա քաղաքական կռապաշտության զարմանալի կենսունակությունը վկայում է այն մասին, որ դեռևս խորությամբ չենք գիտակցել քրիստոնյա մարդուն տրված աստվածային շնորհը՝ ընտրության ազատությունը: Հանրապետության գաղափարն իրականում հենց ընտրության ազատության քաղաքական կերպավորումն է՝ այդ խնդրի լուծման ոչ թե ձևական-էլեկտորալ, այլ բովանդակային-արժեքային տիրություն:

Ուրեմն Հայաստանի արժեքային ու աշխարհաքաղաքական ընտրության միջև առկա խոր հակասությունը հաղթահարելու կարճաժամկետ դեղատոմսեր գոյություն չունեն: Այդ պատճառով որպես հանրապետություն կազմակերպվելու նոր աշխատակարգերի կարիք ենք զգում, որոնք գտնվում են երկրի քաղաքակրթական ընտրության տիրություն:

Առայժմ սոսկ դեկորացիաներ քանդողի դերը ստանձնած նոր իշխանությունը նույնպես որևէ պոզիտիվ գործառույթ չունի, քանի որ 2018 թ. գարնանը տեղի ունեցածի խորքային իմաստը «հներին՝ փող, նորերին՝ իշխանություն» բանաձևի վրա հիմնվող «համապարտ երաշխավորություն» սկզբունքն է: Նորերի մոտ բացակայում է նաև տարրական արհեստավարժությունը, ուստի վերջիններս հասարակության գիտակից

մասի հռեռեսակյան տրամադրությունները մարելու համար ժամանակ առ ժամանակ ճոխացնելու են սուկ «ծիսակարգային զոհաբերության» ենթակա հների «տեսականին»՝ երիցս մեղապարտ ՀՀԿ-ն վերածելով մի յուրահատուկ **ներքաղաքական Զանգիբասարի**: Նման հեռանկարի առկայության պայմաններում այսպես ասած՝ ռուսամետ ուժերի քաղաքական ճամբարը, հայտնվելով իր օլիգարխիկ հենարանի փլուզման վտանգի առջև, փողատերերի վրա հենվելու փոխարեն ինքնակազմակերպման նոր աշխատակարգեր է որոնում:

Բայց արևմտամետ պոպուլիստների և ապաօլիգարխացող ռուսամետների անհեռանկարային մրցակցությունն ապահովում է սուկ փողապետության բուրգի մասնակի փլուզումը և քաղաքական խաղի տարրական կանոնների վերականգնումը, այսինքն՝ Հայաստանի քաղաքական դաշտը բերվում է զրոյական վիճակի: Նույնը տեղի է ունենում նաև հանրապետության տնտեսական հարաբերությունների ոլորտում: Իսկ թե ինչ պետք է անել դրանից հետո, ոչ ոքի հայտնի չէ, քանի որ վերջին իշխանափոխության արդյունքում Հայաստանն իր կամքից անկախ վերածվել է ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների բարելավման գործընթացի **փորձադաշտի**:

Նման պայմաններում նոր իշխանությունն ու նրա առաջին դեմքը, հայտնվելով հանրային ուշադրության կիզակետում, հեղափոխական կարգախոսներից ու դրանցից բխող ցուցադրական գործողություններից այն կողմ չեն անցնում, ուստի այդպես էլ անհայտ է մնում, թե ինչ են անելու նրանք հեղափոխական մեթոդներով իշխանությանը տիրանալուց և ընտրություններում այդ փաստն ամրագրելուց հետո: Որովհետև ներկա անորոշությունների պահպանման պայմաններում խորհրդարանական ընտրությունների արագացումը ոչ թե հստակեցնելու է քաղաքական դաշտի պատկերը, այլ վերածվելու է ապագա Ազգային ժողովին տիրանալու պոպուլիստական հնարքի, ինչը հետին պլան է մղելու հանրապետության ապագայի հանրային ընկալումը բյուրեղացնելու խնդիրը:

Տեղի ունեցած իշխանափոխության՝ իբրև պատմական հնարավորության դիտանկյունից ակնհայտ է միայն, որ այսուհետև Հայաստանում քաղաքական իրավիճակի վերահսկողության բրգաձև համակարգի փոխարեն ազգային շահի բյուրեղացումը տեղի է ունենալու քաղաքական պայքարի ներխորհրդարանական հանրագումարի հստակեցման միջոցով: Նման պայմաններում մեր անվտանգության ապահովման մեջ դերակատար արտաքին բևեռների՝ Հայոց պետականության նավը ձոճելու հնարավորությունները սահմանափակելու համար խորհրդարանական կառավարման համակարգում պարտադիր կերպով պետք է ձևավորվի զուտ հայկական շահերով առաջնորդվող ուժերի ու անհատների խորքային համախմբում: Որովհետև իր սեփական արժեքային ընտրությունը չկատարելու դեպքում Հայաստանին սպասում է վերջին 20-ամյակին բնորոշ նոր գաղութատիրության ռուսական-կայսերական բնորոշի փոխարինումը արևմտյան «կապույտ երջանկության» տեսլականով, որի «թիթեռնիկներն» արդեն հասցրել են ազդեցիկ դիրքեր գրավել հանրապետության նոր ղեկավարության տարբեր ոլորտներում:

Ուրեմն այսօր հարկավոր է մտածել ոչ այնքան արտաքին-աշխարհա-

քաղաքական ազդակները համադրելու մասին (դա նույնիսկ ներկա իշխանավորները կարող են անել), որքան մեր ապագայի դոմները բացող հայկականության արժեքային ուղենիշերի ընկալմանն ու կյանքի կոչելուն ունակ ներքաղաքական խճանկարը հստակեցնելու շուրջ: Հայաստանը ներկայումս չի կարող միանշանակ ընտրություն կատարել ուժի արտաքին բևեռների և երկրի ներսում նրանց շահերը պատճենող արևմտամետ պոպուլիստների և ապաօլիգարխացող ռուսամետների միջև՝ չվտանգելով մեր ազգային արժեքներն ու Ղարաբաղի ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Իսկ սա նշանակում է, որ սեփական՝ ազգային ուղեգծի անորոշության պայմաններում խորհրդարանական ընտրությունների գնացող Հայաստանը **բովանդակային առումով** ընտրություն չունի:

Հայաստանի ու հայության քաղաքակրթական ընտրության բարդ ու բազմաշերտ առաջադրանքի ձևակերպումն ու իրականացումը հայկականության արժեհամակարգի վրա հիմնվող ազգային-ավանդական ուժերի ոչ միայն իրավունքն է, այլև **պարտականությունը**: Այդ խնդրի շուրջ քաղաքական համակարծության ձևավորման և ազգային-քաղաքական ուղեգիծը հստակեցնելու համար հարկ է նախապես սահմանել, որ.

ա) հայկական ինքնությանը օտար են ոչ միայն քրեաօլիգարխիային բնորոշ «արժեքներն» ու կենսակերպը, այլև այսօր մեր ապշահար հանրությանը մատուցվող՝ «կապույտ երջանկության» տեսլականը, որովհետև հայկականությունը հիմնվում է այնպիսի հավիտենական արժեքների վրա, ինչպիսիք են Հայոց դարավոր մշակույթն ու պատմությունը, Հայոց լեզուն, Հայաստանյայց եկեղեցու սուրբ հավատը, հայկական ընտանիքը և Հայաստանի ու հայության անխախտ միասնության սկզբունքը.

բ) ազատության ու արդարության գաղափարների վրա հիմնված հայկական ինքնությունը հայրենի հողի վրա կարող է առարկայանալ միայն հայաստանյան համակեցական նոր միջավայրի ձևավորման միջոցով, որի սոցիալական հիմքը հարազատ հողի վրա սեփական աշխատանքով նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծող և հաջորդական սերունդների հերթափոխն ապահովող՝ աշխատավորական Հայաստանի տեսլականն է.

գ) Հայաստանը հավասարապես բաց է Արևմուտքի ու Արևելքի բարձր մշակույթների ազատ թափանցման համար, բայց նա կտրականապես մերժում է մշակութային թափոնների արտահանման միջոցով մեզ պարտադրվող պարզունակ ընդօրինակումներն ու գռեհիկ նմանակումները, որոնք շեղում են հազարամյակների պատմություն ունեցող մեր մշակույթին բնորոշ ավանդական՝ համադրական գործառույթների իրականացումից.

դ) որովհետև որպես քաղաքակրթական նախահիմք՝ Հայաստանն իրականում և՛ Արևմուտք է, և՛ Արևելք, ուստի արտաքին քաղաքականության մեջ, տնտեսական համագործակցության, մշակութային ու հոգևոր-կրոնական երկխոսության բնագավառներում առաջնորդվում է ոչ թե հավասար հեռավորության պահպանման, այլ սեփական հիմքի վրա դրանք մերձեցնելու ու ներդաշնակեցնելու սկզբունքներով.

ե) իսկ այդ հիմքը կազմող բազային արժեքները բյուրեղացնելու և խորհրդարանական կառավարման բնորդի վրա հիմնվող ժողովրդավարական հանրապետություն դառնալու համար Հայաստանի քաղաքական

համակարգը պետք է ձևավորվի ոչ թե ֆեյսբուքյան «լայքերով» զբաղվելը քաղաքացիական հասարակության չափանիշ համարող պարապ երիտասարդների, այլ սեփական քվեն իրենց համոզմունքի հիման վրա տնօրինող գիտակից և հայրենատեր քաղաքացիների կողմից:

Հայաստանի Հանրապետության 100-ամյակին նախորդած հեղափոխական իրադարձությունների արդյունքում մեր հանրային դիսկուրսի հարթակ վերադարձած հանրապետության գաղափարը կարող է բզկտվել միմյանց խաչաձևվող քաղաքական ու արժեքային թափանցումների մտադրացի մեջ, եթե խորհրդային ավանդույթի վրա հիմնված նրա քառորդդարյա պրոֆանացիային փոխարինեն անհայրենիք աշխարհաքաղաքացիության հովերը, որոնք կրակից դուրս բերելով՝ մեզ կարող են իջեցնել ջրի հատակը: Ուրեմն խորհրդարանական ընտրությունների համատեքստում երկրի արդիականացման ազգային քաղաքական ուղեգիծը հնարավոր է հետապնդել միայն սեփական մշակույթի, ազգային ավանդույթների և ընկերային արդարության տեսլականի վրա հիմնվող հայրենասիրական ուժերի **արթնացման** ու **ակտիվացման** միջոցով:

Դա ոչ միայն և ոչ այնքան ներքաղաքական հրամայական է, որքան մեր շուրջն ընթացող արտաքին ու ներքին բարդ ու վտանգավոր զարգացումների ողջ հանրագումարից բխող պատմական անհրաժեշտություն: Որովհետև մեր երկրում տեղի ունեցած վերջին իշխանավոխության պատճառների ու հետևանքների եռաչափ ընկալման տիրույթում դարաբաղյան թնջուկի նոր պայթեցումը պարզապես անխուսափելի է դարձել, և խնդիրը միայն **ժամանակի մեջ** է: Ուրեմն անկախ նրանից, թե ընտրություններից առաջ կամ հետո է տեղի ունենալու Ղարաբաղյան հակամարտության նոր բռնկումը, այն պարզապես զրոյացնելու է ոչ միայն Հայաստանի քաղաքական ուժերի մեծ ու փոքր հաշվարկները, այլև հեղափոխական մթնոլորտի արհեստական երկարաձգմամբ զբաղվող նոր իշխանության ծրագրերը: Իսկ դա նշանակում է, որ քաղաքակրթական ընտրության խաղաղ կամ էլեկտորալ տարբերակը շուտով իր տեղը գիջելու է **գոյության կռվում** հաղթելու հրամայականի վրա հիմնվող ազգային-քաղաքական ուղեգծին:

Խմբ.:

DANGEROUS ROUTE OF THREE DIMENSIONAL PROCESS

Edit.

ОПАСНАЯ ТРАЕКТОРИЯ ТРЕХМЕРНОГО ПРОЦЕССА

Ред.